

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« ..... » .....2018 թվականի N ....Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1579-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 1579-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) N 1 հավելվածում 10-րդ կետի «ժա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ժա) կրթության և գիտության բնագավառներում պետական ծրագրային բյուջետավորման և գնումների գործընթացի կազմակերպում.».

2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմում՝

ա. լուծարել Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունը.

բ. ստեղծել Ֆինանսաբյուջետային վարչություն և գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն:

3) N 2 հավելվածի «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «Վարչություններ» բաժնում՝

ա. ուժը կորցրած ճանաչել «Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն» պարբերությունը.

բ. լրացնել նոր պարբերություններ՝  
«Ֆինանսաբյուջետային վարչություն  
Գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

#### 1. Անհրաժեշտությունը

Հիմք ընդունելով 25.04.2017թ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 9-րդ կետը անհրաժեշտ է վերանայել պետական կառավարման մարմնի կազմում գործող ԾԻԳ պետական հիմնարկին գնումների համակարգողի լիազորության փոխանցումը, քանի որ այն նպատակահարմար և արյունավետ չէ և առաջացնում է աշխատանքային բազմաթիվ դժվարություններ, հաշվի առնելով, որ.

1. համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության գնումների համակարգողը անմիջականորեն հաշվետու է նախարարության աշխատակազմի ղեկավարին, որին վերապահված է պատվիրատուի լիազորությունը, քանի որ այն փոխանցված չէ ԾԻԳ-ին;
2. գնումների համակարգողը կազմում և նախարարության աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնման ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը, ներառյալ գնման պայմանագրերը;
3. գնումների համակարգողը PPCM, ARMEPS և Clienttreasury ծրագրերով մուտքագրում է գնման գործընթացների մասին հաշվետվությունները, որոնք հաստատվում են աշխատակազմի ղեկավարի կողմից;
4. գնումների համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին, ուստի վերջինիս գործառույթները սերտ կապված են նախարարության այլ, որպես պատասխանատու, ստորաբաժանումների հետ;
5. գնումների համակարգողը [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում տեղադրում է նախարարության և նախարարության ենթակայությամբ գործող շուրջ 260 պատվիրատուների ընթացիկ տարվա գնումների պլանը, գնումների հայտարարությունները և հրավերները, պայմանագիր կնքելու մասին որոշումները, կնքված պայմանագրերի

մասին հայտարարությունները, ինչպես նաև դրանց փոփոխություն կատարելու մասին հայտարարությունները, որոնք պետք է իրականացվեն նախարարության կողմից որպես լիազոր մարմին մի կողմից և գնումների համակարգողի՝ մյուս կողմից, քանի որ անհրաժեշտ են մասնագիտական հմտություններ;

6. գնումների համակարգողը յուրաքանչյուր եռամսյակի ավարտին իրականացնում է նախարարության, ինչպես նաև նախարարության ենթակայությամբ գործող շուրջ 120 /բացառությամբ դպրոցների/ պատվիրատուների կողմից իրականացված գնումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության հավաքագրում, վերլուծում, ամփոփում և ՀՀ ՖՆ ներկայացում:

## **2.Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը:**

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում որոշ պետությունների պետական կառավարման համակարգերում կիրառվող մոտեցումները ուղղված են բարձրացնելու կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը՝ նպատակային դարձնելով կառույցի կազմակերպչական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների օգտագործումը: Նախարարության աշխատակազմի կառուցվածքի վերանայումը հնարավորություն տվեց բացահայտելու նախարարության գործունեության զարգացման համար անհրաժեշտ նոր ուղղություններն ու հնարավորությունները, ինչպես նաև հստակեցնելու գործառույթների պլանավորման և/կամ ծառայությունների մատուցման գործընթացները՝ բացառելով դրանց ֆունկցիոնալ կրկնությունները:

Արդյունավետ կառավարման նոր մոտեցման առանցքային խնդիրներից են ինստիտուցիոնալ զարգացումը, կարողությունների համախմբումը և հզորացումը, գործընթացների պլանավորման և իրականացման հստակեցումը, հաշվետվողականության բարձրացումը:

Նախարարության գործունեության և դրա արդյունավետության բարելավումն ուղղորդվում է հանրային կառավարման և պետական ու քաղաքացիական ծառայության բարեփոխումներին համընթաց: Ներկայումս պետական կառավարման համակարգում իրականացվում են մի շարք գործընթացներ, որոնք պայմանավորում են նաև ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի գործունեության հստակեցման և կատարողականի բարձրացման անհրաժեշտություն, օրինակ՝ ծրագրային բյուջետավորման գործընթաց, էլեկտրոնային գնումների համակարգում, ֆինանսական կառավարում և այլն: Հետևաբար, աշխատակազմի արդյունավետ կառավարումը հնարավոր է ապահովել հստակ սկզբունքներով և գործառույթներով գործող համակարգի ներդրմամբ:

Կրթության բնագավառի ծրագրերի կառավարման և ֆինանսական ռեսուրսների պլանավորման գործընթացը հանդիսանում է որոշիչ գործոն՝ երկրում կրթական ծրագրերի և ծառայությունների մատուցման արդյունավետության ու ներգործունեության աստիճանը որոշելիս: Աշխատակազմի ստորաբաժանումների գործառույթների վերանայման շրջանակում, կսահմանվեն ծրագրային բյուջետավորման և ֆինանսական պլանավորման, ինչպես նաև գնումների համակարգման գործընթացները՝ հստակեցնելով յուրաքանչյուր ստորաբաժանման պատասխանատվություններն ու գործողությունները:

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության վերակազմակերպման արդյունքում, հնարավոր կլինի բարձրացնել կրթության համապատասխան բնագավառում ծրագրային բյուջետավորման կառավարման արդյունավետությունը, որը կներառի հետևյալ սկզբունքները՝

1. ըստ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի՝ քաղաքականության միջոցառումների, պատասխանատուների նշանակում,
2. ծրագրային բյուջետավորման պլանավորման շրջանակներում կրթության համապատասխան բնագավառի զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացման ապահովում,
3. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի համակարգում, մոնիթորինգ և գնահատում՝ ծախսային արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
4. ծրագրային բյուջետավորման իրականացման կատարողականի բարձրացում:

### **3.Ակնկալվող արդյունք**

Փոփոխությունների արդյունքում ակնկալվում է գնումների գործընթացի կազմակերպման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացում:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը չի նախատեսում պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:



2.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան		
3.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:</p>		